ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» իրավաբանական գիտությունների ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Դոկտորական ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է մարդկային հասարակության որպես համաշխարհային համայնքի բոլոր ժամանակներին ներհատուկ մարդու և քաղաքացու տնտեսական, պետական և քաղաքական ու քաղաքացիական խորը տեղաշարժերի բնույթով, որոնք ուղղորդում են անհատի իրավական կարգավիճակի սահմանմանը ինչպես սեփական երկրի, այնպես էլ այլ պետությունների տարածքներում, որոնք կարող են վրա հասնել մշտական բնակության վայրից տեղաշարժի ճանապարհով (փոփոխելով):

Քաղաքացիների ազատ տեղաշարժը, բնակության վայրի փոփոխությունները ինչպես սեփական երկրի, այնպես էլ այլ պետությունների տարածքներում, ինչպես ընդգծում է ատենախոսության հեղինակը, վրա են հասնում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ներազդեցությամբ, որոնց իրավակարգավորումները բացահայտված են իարվունքին ներհատուկ մասնագիտական՝ իմպերատիվ և դիսպոզիտիվ մեթոդների միգրացիոն երևույթների խորը վերլուծությունների իրավական կարգավորումների առանձնահատկությունների գնահատմամբ:

Ներկայումս պետությունների և երկիր մոլորակի ազգաբնակչության տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացումների գլոբալիզացիան օրակարգի հրամայական է դարձնում մարդու, քաղաքացու և անհատի ինչպես ներպետական-սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային իրավական կարգավիճակի, հատկապես քաղաքացու և ազգերի անվտանգության ապահովման հիմնախնդիրները, մարդու աշխարհի ցանկացած պետությունում ազատ ապրելու բնական իրավունքը:

Ատենախոսության քաղաքական և իրավական բովանդակության առանձնահատկությունների սահմանազատման հիմնախնդիրը մեկ միասնության շրջանակ-

ներում ամբողջական գիտական բացահայտումներին մեծապես օգնել է ատենախոսության ներքին կառուցվածքային բաղադրատարրերի ճիշտ ընտրությունը, որի շնորհիվ քննարկման ներկայացված գիտահետազոտական աշխատանքը ունի հարցադրումների տրամաբանական բնույթ, որի կառուցվածքային բաժինները շարադրված են քաղաքական և իրավական եզրույթների պատճառ-հետևանքային դիալեկտիկական կապի բնական զարգացումներին համահունչ:

Աշխատանքի հեղինակը դոկտորական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ պահանջների պահպանմամբ հիմնախնդրի արդյունավետությունը ներկայացրել է այնպիսի արժեքների խորը վերլուծություններով, ինչպիսիք են թեմայի ընտրության նպատակը, խնդիրները, բացահայտման առարկան, քննարկման և պաշտպանության պահանջ հարուցող տասնյակ ենթահարցեր, որոնց վերլուծությունները վկայում են գիտահետազոտական աշխատանքի որակական նորույթների մասին, որոնց գործնական կիրառումը կարող է մեծ ավանդ հանդիսանալ հայրենական իրավագիտության ոլորտում և նոր շունչ հաղորդել մարդու և քաղաքացու բնական իրավունքների և ազատությունների երաշխավորված իրավական պաշտպանության գործընթացներին:

Ատենախոսության որպես գիտական հետազոտության անհրաժեշտությունը լուսաբանված է այն նպատակների և խնդիրների համակցությամբ, որոնք ներկայումս ոչ միայն մեր հանրապետության ազգաբնակչության, այլև աշխարհի շատ ազգերի և ազգությունների բնական իրավունքների իրավական պաշտպանվածությունը միգրացիոն հարաբերություններում առաջին պլան են մղում էմիգրանտների երաշխավորված տնտեսական, սոցիալ-մշակութային, ինչպես նաև վարչաքաղաքական իրավունքների պաշտպանությունը ինչպես սեփական, այնպես էլ ազատ տեղաշարժի և ըստ բնակության վայրի ընտրությունն այլ պետություններում օրինական ճանապարհներով հայտնվելու դեպքում:

Առաջադրված նպատակներին հասնելու համար հեղինակը քննարկման է ներկայացրել մեկ տասնյակից ավել հիմնախնդիրներ, որոնք լուսաբանվել են որպես հեղինակային բանաձևեր:

Պաշտպանության ներկայացված նպատակ-խնդիրների շարքում ուշադրության է արժանի միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման

հեղինակային բնորոշումը, իրավական կարգավորման գործառույթների և սկզբունքների համակարգը, դրանց գործնական կիրառման արդյունավետությունը և մի շարք իրավական կարգավորում պահանջող այլ հարցերի լուսաբանումներ:

Աշխատանքի բովանդակության, կառուցվածքի, քննարկման ներկայացված մի շարք իրավական և քաղաքական հիմնախնդիրների որակական գնահատման հարցում ունեմ մի շարք նկատառումներ, որոնք իրենց բնույթով չեմ ներկայացնում որպես թերություններ, այլ ընդգծում եմ որպես իրավական հայեցակարգերի ընկալման տարակարծություններ:

1. Իմ նկատառումների մի մասը ուղղված է դոկտորական ատենախոսության վերատառության ընկալումներին: Այլ խոսքով աշխատանքի չորս գլուխներն և ենթահարցերը պետք է արձանագրեն իրավաքաղաքական, այլ ոչ թե քաղաքական-իրավական ըմբռնումների արցահայտումները:

Կարծում եմ այն պետք է ամփոփեր միայն «Միգրացիայի սահմանադրաիրավական հիմնախնդիրները», որի բացահայտումները ինքնին վկայում են հիմնախնդրի իրավագիտական-պետական մշակույթը և վերջինիս որպես գիտական արժեքի գործնական-կիրառական նշանակությունը:

Այլապես, հիմնախնդրի նման արձանագրումը արհեստական լուրջ դժվարություններ է ստեղծում հեղինակի գիտական բացահայտումների համար երկփեղկելով թեման երկու՝ քաղաքագիտական և իրավագիտական տասնյակ ինստիտուտների ըմբռնումների լուսաբանումների, որոնց սահմանազատումները ինքնին առանձին գիտահետազոտական արժեք են ներկայացնում:

Սույն աշխատանքի գիտահետազոտության նման մեթոդոլոգիան տեղիք է տվել ատենախոսության ծավալի ընդլայնմանը (420 էջ):

Անդրադառնալով դոկտորական ատենախոսության կառուցվածքի համակարգին նկատենք, որ աշխատանքի չորրորդ գլխի § 6-րդ (362-370 էջեր), որը նվիրված է «Արցախի Հանրապետության քաղաքացիության հիմնախնդիրների միգրացիոն գործընթացների համակարգում. լուծումների առանձնահատկություններին և հեռանկարներին» որպես կառուցվածքային ոլորտ չի հիմնավորվում, քանի որ ատենախոսության գիտական բացահայտումների խնդիրը «ՀՀ միգրացիոն քաղաքականությունն է, վերջինիս սահմանադրաիրավական կարգավորումները»:

Չխորացնելու և իրավական հակացություններից խուսափելու համար նկատենք, որ ՀՀ սահմանադրության նորմերը էքստերիտորիալ ներգործության ուժով օժտված չեն:

Այս պարագրաֆը կարելի էր տարալուծել նյութի ընդհանուր վերլուծություններում:

Ատենախոսության կառուցվածքի տեսանկյունից վերջինիս գիտական ապարատի մի մասն է կազմում 383-ից մինչև 396 էջերում ամփոփված «պետությունների վիրտուալ տարածքը (սահմանը) և վիրտուալ աշխատանքային միգրացիան ճանաչելու և իրավակարգավորման ենթարկելու մասին» կոնվենցիայի հեղինակված (նախագիծը):

Կոնվենցիան միջազգային իրավական ակտ է, որը ի տարբերություն ներպետական օրենսդրական ակտերի ընդունման, փոփոխման և դադարեցման կարգի, ունի օրենսդրական բարդ ընթացակարգ, որի սուբյեկտները հանդիսանում են միայն պետությունների կառավարությունները և վերջիններս ընդունվում են բացառապես հատուկ կարևորություն ունենցող հարաբերությունների կարգավորման համար: Կոնվենցիան ունի լատինական ծագում – convention – որը հայերեն թարգմանվում է «համաձայնություն», «պայմանագիր»:

Միջազգային իրավական այս ակտի նախագծման, հասցեագրման մասին աշխատանքում հղում չկա: Հասկանալի է, այն գիտական նախաձեռնություն է, որը դուրս է միգրացիայի ներպետական (ՀՀ տարածքում), հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակներից, այն որպես միգրացիան կարգավորող միջազգային իրավական ակտի նախագիծ անհրաժեշտ է հղել ՀՀ ԱԳՆ-ը կամ կառավարությանը:

2. Իմ նկատառումների հաջորդ խումբն ուղղված է հիմնախնդրի իրավագիտական, թեմայի առանձնահատկություններից բխող տեսական, ելակետային դրույթների ծագման ստուգաբանությանը, որոնցով նաև գնահատվում է այս ոլորտում կատարված բացահայտումների որակական արժեքը, և մատնացույց է արվում, գիտական հետազոտությունը որպես նոր իրավական աշխարհայացքի անհրաժեշտությունը:

Նկատենք, որ գիտության ոլորտում՝ (բնական, հումանիտար) որպես կանոն բացահայտումները սկսվում են հիմնախնդրի ծագումնաբանական-գենետիկ

առանձնահատկությունների լուսաբանումներով, որին բծախնդրորեն հետևել է ատենախոսության հեղինակը, աշխատանքի 31-ից 33-րդ էջերում անդրադառնալով «Միգրացիայի-լատինական» ծագումնաբանությանը, հայոց լեզվում որպես «արտաբնակեցում» եզրույթների բովանդակության արժեվորմանը:

Ատենախոսությանը հայրենական իրավագիտության ոլորտում որպես «Միգրացիայի և միգրացիոն գործունեության» սահմանադրաիրավական բացահայտումներին ուղղված առաջին փորձ, կարծում եմ, մեծ ավանդ կհանդիսանար, եթե հեղինակը հիմնախնդրի լատինական ծագումնաբանությունը հարստացներ Ա. ղարիբյանի, Է. Աղայանի, բացատրական բառարաններից կատարված այնպիսի քաղվածքներով, ինչպիսիք են օրինակ, Ա. Ղարիբյանի բառարանում «Эмигрант»-ի հայերեն «վտարանդի», «տարագիր», «արտագաղթ» եզրույթները, որոնք հաջորդ հետազոտողների համար օրինակ կհանդիսանային հայ իրավագիտության ոլորտում հիշյալ եզրույթները մայրենի լեզվով օգտագործելու համար (տե՛ս Ա. Ղարիբյան, «Ռուս-հայերեն» բառարան, Ե., 1968, էջ 1398):

3. Դոկտորական ատենախոսության որակական ցուցանիշների գնահատման իմ նկատառումների երրորդ խումբը վերաբերում է աշխատանքի երկրորդ գլխի «Միգրացիայի սահմանադրաիրավական կարգավորման ինստիտուցիոնալ հիմնախնդիրների» 2.4 և 2.5 ենթաբաժինների կառուցվածքին, բովանդակության տարրերի սահմանադրաիրավական բացահայտումներին, որոնք լայն առումով ուղղված են ՀՀ միգրացիոն օրենսդրության և դրա ռազմավարական հետևանքների սահմանադրաիրավական կարգավորումներին:

Նկատենք, որ հաղինակը հիշյալ գիտահետաղոտական աշխատանքի առանցքը դիտարկել է ՀՀ սահմանադրության 40-րդ հոդվածի «ազատ տեղաշարժվելու և բվակավայր ընտրելու իրավունքի» սահմանումները, որի աղբյուրը ըստ էության «Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրի» 13-րդ հոդվածն է:

Ատենախոսության 154-ից 179 էջերը նվիրելով ՀՀ միգրացիոն օրենսդրության համակարգի ռազմավարության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտումներին, գործող նորմատիվ և ենթաօրենսդրաիրավական ակտերի բացթողումների, թերությունների վերացմանը, ինչպես նաև ժամանակակից գլոբալիզացիայի պահանջներին համահունչ նոր բովանդակությամբ ՀՀ միգրացիոն գործունեության

իրավակարգավորումների օրենսդրության մշակմանը անհրաժեշտ էր նաև իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ սահմանել ճյուղային օրենսդրության համակարգը, վերջինիս կառուցվածքի սկզբունքները և ճշգրիտ սահմանազատել պետության միգրացիոն գործունեությունը համանման այնպիսի գործունեության ուղղություններից, ինչպիսին է, օրինակ ՀՀ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» 2003 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված օրենքը, որը ըստ էության միգրացիոն օրենսդրությամբ համակարգի տարր է, որի սուբյեկտների սահմանադրաիրավական կարգավիճակը իր բովանդակությամբ չի սահմանազատվում «միգրանտի» բնութագրից: Օրինակ, հիշյալ օրենքի երկրորդ հոդվածում «այցելու», «ներքին զբոսաշրջություն», «արտագնա զբոսաշրջություն», «ներգնա զբոսաշրջություն» եզրույթները ըստ էության իրենց բովանդակությամբ համընկնում են ատենախոսության «սեղմագրի» հրապարակային պաշտպանության ներկայացվող 8-րդ հիմնադրույթի բովանդակությանը (էջ 19): Ըստ որի «միգրացիան» քաղաքացու տեղաշարժն է մի պետության տարածքից մյուսը, ներառյալ վիրտուալ, որի քաղաքացին նա չի հանդիսանում:

Իհարկե զբոսաշրջությունը իր նպատակներով, խնդիրներով, կազմակեպման կամավորության մեթոդով, իրավական հետևանքներով էապես տարբերվում է «միգրացիոն» գործունեությունից: Նկատենք, որ հիշարկված օրենքը ուշադրության արժանանալու դեպքում մեծ նպաստ կհանդիսանա միգրացիայի օրենսդրության կատարելագործման ոլորտում:

4. Միգրացիոն գործունեությունը կարգավորող իրավական ակտերում մարդու և քաղաքացու սահմանադրական ազատությունների, իրավունքների և պարտականությունների իրականացմանը նոր բնույթ կհաղորդեին միգրանտների իրավունքների պաշտպանության **իրավական երաշխիքների համակարգված բացահայտումները**, որոնք աշխատանքում քննարկման չեն ներկայացված, չնայած առանձին դրվագներով արտացոլված են տարբեր գլուխներում, օրինակ աշխատանքային միգրացիան, օտարերկրացիներին սոցիալ-տնտեսական իրավունքներ վերապահելը այլն:

Վերոհիշյալ նկատառումները կրում են մասնակի բնույթ և չեն նսեմացնում աշխատանքի ընդհանուր դրական արժեքը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ա. Հայրապետյանի ատենախոսության հիմնական դրույթները բավարար չափով արտացոլված են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում: Ատենախոսությունը կարող է գնահատվել իբրև էական նվաճում սահմանադրական իրավունքի տեսության բնագավառում:

Ելնելով վերոնշյալից, կարծում եմ՝ Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» թեմայով դոկտորական ատենախոսությունն ամբողջական և ավարտուն գիտական հետազոտություն է, համապատասխանում է ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«»Հասարակագիտություն ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր Ն.Գ. Սուքիասյան

Ն.Գ. Սուքիասյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
գիտական քարտուղար Ն. Դարբինյան